«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

**Մասնագիտությունը**

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

**Մոդուլի անվանումը՝**

«Պարզ և բարդ հանդիսավոր սանրվածքներ»

**Արդյունք1. Ձևավորել պարզ հանդիսավոր սանրվածքներ**

**Թեմա1.1Մազերի նախապատրաստում համապատասխան սանրվածքի:**

Վարսավիր-վարպետը կտրվածքի պահին նման է նկարչի, իսկ սանրվածք ստեղծելու գործընթացում վերափոխվում է քանդակագործի:

Կյանքում լինում են այնպիսի իրավիճակներ, երբ սովորական հարդա- րանքը բավարար չէ ավելի գեղեցիկ և արտառոց ներկայանալու: Այս դեպ- քում հաճախորդը դիմում է վարսահարդարի օգնությանը՝ ավելի հետաքրքիր ու հանդիսավոր սանրվածք ունենալու համար: Զրույցի միջոցով վարսահարդարը պետք է փորձի հասկանալ, թե հաճախորդն ինչ ոճի սա- նրվածք է նախընտրում: Շատ կարևոր է նաև պարզել, թե ի՞նչ հագուստ է կրելու հաճախորդը և թե ի՞նչ դերում է հանդես գալու: Մինչ աշխատանքի սկսելը պետք է նկարագրել սանրվածքը՝ ձևավորելով հաճախորդի մոտ պատկերացում վարսահարդարումից հետո ստացվելիք սանրվածքի վե- րաբերյալ: Սանրվածքի ընտրությունը մեծապես պայմանավորված է նաև հաճախորդի դեմքի, պարանոցի կառուցվածքով, ինչպես նաև նրա տարի- քով և նախասիրությամբ:

Հետևելով հիգիենայի կանոններին՝ մազերը լվանում են:

Հանդիսավոր բարդ սանրվածք իրականացնելու համար վարսահար- դարը ձեռքի տակ պետք է ունենա ուժեղ ֆիքսացիայով լաք, մուս, գա- մասեղներ, անտեսանելի ամրակներ /невидимка/, մազակալներ և զար- դարանքներ: Աշխատանքային գործիքներից՝ մազաբաժանման և մազերը գզելու սանրեր, խոզանակ՝ հարդարելու, վարսահարդարիչ, էլեկտրափա- թուկ: Բարդ հանդիսավոր սանրվածքներ ստանալու համար մազերը պետք է նախապես հարդարել կամ գանգրացնել համապատասխան սարքերով: Մազերը կարող են լինել ամբողջությամբ կամ մասամբ հավաքված: Ընտր- ված սանրվածքը պետք է թաքցնի հաճախորդի արտաքին թերությունները՝ փոխարենն ընդգծի նրա գեղեցկությունը:

**Գործնական աշխատանք**

Կատարել մազերի նախապատրաստում սանրվածքի համար՝ըստ հրահանգի:

**Թեմա 1.2 Նյութերի, գործիքների և օժանդակ պարագաների ընտրում ու օգտագործում՝ պահպանելով քայլերի հաջորդականությունը**

Յուրաքանչյուր պարզ հանդիսավոր սանրվածք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ լավ ֆիքսացիայի լաք, մուս, ոսկ:Մազերի անհրաժեշտ ձևը ստանալու համար/ուղիղ կամ ալիքաձև/ պետք է ունենալ վարսաարդուկ, վարսահարդարիչ, էլեկտրափաթաթուկներ տարբեր մակերևույթներով/ հարթ, ակոսավոր,տարբեր չափերի /:Օժանդակ պարագաները նույնպես անփոխարինելի են վերջական արդյունքին հասնելու համար: 1
Օգտագործվում են անտեսանելի ամրակներ/неведимки,шпильки/ էլաստիկ կապեր/резинки/, տարբեր գույների ցանցեր,արհեստական մազափունջներ, դեկորատիվ անրակներ:

Գործնական աշխատանք

Կատարել նյութերի, գործիքների և օժանդակ պարագաները ընտրություն: Ներկայացնել կատարվելիք գործընթացի հաջորդականությունը:

Թեմա 1.3Պարզ հանդիսավոր սանրվածքի ձևավորում

Մեկ կտրվածքի հիման վրա հնարավոր է մոդելավորել տարբեր սանր- վածքներ: Օրինակ՝ «կառե» կտրվածքն ունի ներկայացման տասնյակ տար- բերակներ: Սանրվածքին թարմություն կարող է հաղորդել ճերտաներկումը /միլիրովկան/, կոլորիրովկան, տարբեր տեսակի ճակատային մազափնջե- րը և այլն:



Մեկ կտրվածքի հիման վրա տարբեր սանրվածք- ների մոդելավորում:

1 2 3 4



5 6 7

Փոփոխելով միայն բաժուկի ուղղությունը և ձևը՝ նույն սանրվածքին կարելի է թարմություն հաղորդել:

1. Թեք բաժուկ, 2. Կայծականման բաժուկ, 3. Զիգզագանման բաժուկ,
4. 60-թվականների բաժուկ, 5. Անկյունագծային բաժուկ, 6. Անհամաչափ բաժուկ,
7. Տախտակամանման բաժուկ:

Սանրվածքներ՝ երկար մազերից
Երկար մազերից հնարավոր է ստանալ բազմազան սանրվածքներ

Պարզ սանրվածքներ՝ երկար մազերից:





Դասական սանրվածք՝ երկար մազերից:

Սանրվածքներ՝ մազակալի օգնությամբ: Ֆրանսիական հյուսք: Հավաքած մազեր:







Ֆրանսիական հանգույց: Դասական փունջ: Ֆրանսիական խեցի:

Հարցեր

Ինչպե՞ս կարելի է մեկ սանրվածքի հիման վրա ստանալ մեկ ուրիշ սանրվածք:------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------

Ներկայացնել սանրվածքների տեսակներից,որոնք կիրառվում է պարզ հանդիսավոր սանրվածքներ ստանալու համար:------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------







# ՄԱԶԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ, ՉՈՐԱՑՈՒՄ














## Մազերի հարդարում փաթաթուկով




ՄԱԶԵՐԻ ՀԱՐԴՆՈՐԱՐՈՒՄ ԴԻՖՈՒԶՈՐՈՎ

















Արդյունք 2. Ձևավորել բարդ հանդիսավոր սանրվածքներ
սԹեմա 2.1Մազերի նախապատրաստում համապատասխան սանրվածքի համար
Այսօր վարսահարդարը հնարավորություն ունի անհրաժեշտության
դեպքում հաճախորդի մազերը երկարացնել կամ դրանք խտացնել: Այս
գործընթացը կարող ենք իրականացնել` նախապես ձեռքի տակ ունե-
նալով տվյալ հաճախորդի մազի գույնին և որակին համապատասխան
շինյոն-մազափունջ: Շինյոն- մազափնջերն ունեն փոքրիկ, սանրանման
մազակալներ, որոնց միջոցով ամրացվում են հաճախորդի մազերին: Ամ- րացվող
հատվածը զգում են և փիքսում լաքով: Մազերն ամբողջությամբ հավաքած
սանրվածքները լինում են սիմետրիկ /համաչափ/ և ասիմետ- րիկ /անհամաչափ/:
Համաչափ են /սիմետրիկ/ այն սանրվածքները, որո- նց դեպքում և՛ աջ, և՛ ձախ
հատվածները նույնությամբ կրկնվում են: Ան- համաչափ /ասիմետրիկ/
սանրվածքների դեպքում` աջ և ձախ կողմերը իրարից տարբերվում են: Եթե
սանրվածքի համար հարկավոր են գանգուր մազեր` փաթաթված
վարսափաթաթուկով, ապա հարկավոր է հաճախորդի մազերը լվանալ, սրբիչով
չորացնել, այնուհետև մազերին տարածել մուս` փիքսացիա հաղորդելու
նպատակով: Կատարել մազաբաժանում: Փաթաթ- վող մազափնջերը վերցնում են
հնարավորինս բարակ, որպեսզի շուտ չո- րանան: Մազերը փաթաթում են
ներքևից վերև: Փաթաթելուց հետո հաճա- խորդին նստացնում են չորանոցի
տակ, որը պետք է ապահովի 50˚-60˚C
ջերմություն: Չորանալուց հետո, որը տևում է 30-45 րոպե, թողնում ենք ևս
5 րոպե, որպեսզի մազերը սառչեն և հետո նոր միայն քանդում ենք վար-
սափաթաթուկները: Սկսում են քանդել այն հերթականությամբ, ինչ հեր-
թականությամբ փաթաթել են:
Հավաքված բարդ սանրվածքների թվին է պատկանում նաև «պոչը»: Որքան
մազերը կարճ են, այնքան քիչ քանակությամբ մազ են տրամադ- րում պոչը
հավաքելուն և հակառակը, եթե մազերը երկար են,ապա պոչը հավաքվում է մեծ
քանակությամբ մազերով: Այն հավաքվում է գլխի այն հատվածում, որտեղ պետք
է լինի սանրվածքի ամենածավալուն մասը: Սա- նրվածքն ամբողջությամբ կարող
է լինել աջ կամ ձախ հատվածում: Այս դեպքում պոչը կապում են նախընտրելի
կողմում: Մեկ սանրվածքի համար կարելի է ունենալ մի քանի պոչեր, բայց
անկախ հավաքվող պոչի տեղից և քանակից` սանրվածքը գլխի վրա պետք է երևա
որպես մեկ ամբողջու- թյուն` ապահովելով գեղարվեստական ճաշակ և
հանդես գալով որպես գեղեցիկ կոմպոզիցիա:
Իրենց ոճային նրբություններով հարսանեկան սանրվածքները մյուս բարդ և
հանդիսավոր սանրվածքներից առանձնանում են: Հարսնացունե- րն իրենց
պսակադրության օրը ցանկանում են լինել յուրահատուկ, գե- ղեցիկ և
անկրկնելի: Վարսահարդարից պահանջվում են մեծ ճիգեր` այդ օրը հարսնացուի
համար ներկայանալի տեսք ապահեվոլու համար: Պարզ հավաքված սանրվածքը
նույնիսկ պետք է լինի նոխ: Հարսանեկան արա- րողությունը ռոմանտիկ երևույթ
է, և հարսի սանրվածքն էլ պետք է հա- մապատասխանի այդ ռոմանտիկ
մթնոլորտին: Հարսանեկան սանրվածք անբաժան մասն են կազմում զարդերը:
Դրանց միջոցով հնարավոր է թա- քցնել սանրվածքի որոշ թերությունները /եթե
դրանք, այնուամենայնիվ, ի հայտ են եկել/ և հմայք հաղորդել դրան: Այդպիսի մի
ջոցներից են թագը, փայլուն քարերը, մարգարիտները, բնական կամ
արհեստական ծաղիկնե- րը, ժապավենը և այլն: Զարդարանքը պետք է
համապատասխանեցնել թե' հագուստին և թե' սանրվածքին: Զարդարանքի
ծավալը կախված է սանր- վածքի ծավալից:
Ավարտուն սանրվածքը պետք է լինի հարթ, առանց ավելորդ մազմզուկ-
ների /դրանք կարող ենք հարթացնել լաքի և սանրի օգնությամբ/: Հանդի-
սավոր բարդ սանրվածքների ժամանակ հաճախ մազերին ծավալ հաղոր-
դելու համար անհրաժեշտություն է առաջ գալիս դրանք զգելու: Քանի որ
զգված հատվածի արտաքին շերտը պետք է լինի շատ հարթ, այդ պատճա-
ռով թողնում են մի օժանդակ մազափունջ` զգված հատվածը ծածկելու հա-
մար: Հաճախորդի արտաքին տեսքի լիարժեքությունը կապահովվի, եթե
վարսահարդարումը զուգակցվի համապատասխան դիմահարդարման հե

Հարցեր

Թեմա 2.2 Նյութերի, գործիքների և օժանդակ պարագաների ընտրում ու օգտագործում՝ պահպանելով քայլերի հաջորդականությունը

Գործնական աշխատանք

Ընտրել նյութերը,գործիքները և օժանդակ պարագաները, որոնք անհրաժեշտ են գործընթացը կատարելու համար:

Ներկայացնել աշխատանքի կատարման հերթականությունը:

Թեմա 2.3Բարդ հանդիսավոր սանրվածքի ձևավորում՝ կարճ մազերի համար

Սանրվածքներ կարճ մազերից





Էլեգանտ սանրվածք:



Դասական կարճ սանրվածք:

«Կառե» երկու երկարությամբ



:



Ռոմանտի
կ սանրվ
ածք է»

Շերտավոր
«կառե





Դասական
«կառե»

Միջին երկա- րության
«կառե»

Գործնական աշխատանք

Հաճախորդը Ձեզ է դիմել խորհրդով, որպեսզի օգնեք իրեն ընտրելու բարդ հանդիսավոր սանրվածք կարճ մազերի համար : Ի՞նչ քայլեր կձեռնարկեք: Որտեղի՞ց կսկսեք ձեր աշխատանքը: Ներկայացրե՛ք այն ու մեկնաբանե՛ք:

## Թեմա 2.4Բարդ հանդիսավոր սանրվածքի ձևավորում՝երկար մազերի համար:

Վարսավիր-վարպետը կտրվածքի պահին նման է նկարչի, իսկ սանրվածք ստեղծելու գործընթացում վերափոխվում է քանդակագործի:

Կյանքում լինում են այնպիսի իրավիճակներ, երբ սովորական հարդա- րանքը բավարար չէ ավելի գեղեցիկ և արտառոց ներկայանալու: Այս դեպ- քում հաճախորդը դիմում է վարսահարդարի օգնությանը` ավելի հետա- քրքիր ու հանդիսավոր սանրվածք ունենալու համար: Զրույցի մի ջոցով վարսահարդարը պետք է փորձի հասկանալ, թե հաճախորդն ինչ ոճի սա- նրվածք է նախընտրում: Շատ կարևոր է նաև պարզել, թե ի՛նչ հագուստ է կրելու հաճախորդը և թե ի՛նչ դերում է հանդես գալու: Մինչ աշխատանքի սկսելը պետք է նկարագրել սանրվածքը` ձևավորելով հաճախորդի մոտ պատկերացում վարսահարդարումից հետո ստացվելիք սանրվածքի վե- րաբերյալ: Սանրվածքի ընտրությունը մեծապես պայմանավորված է նաև հաճախորդի դեմքի, պարանոցի կառուցվածքով, ինչպես նաև նրա տարի- քով և նախասիրությամբ:

Հետևելով հիգիենայի կանոններին` մազերը լվանում են:

Հանդիսավոր բարդ սանրվածք իրականացնելու համար վարսահարդարը ձեռքի տակ պետք է ունենա ուժեղ ֆիքսացիայով լաք, մուս, գամասեղներ, անտեսանելի ամրակներ /невидимка/, մազակալներ և զարդարանքներ: Աշխատանքային գործիքներից` մազաբաժանման և մազերը գզելու սանրեր, խոզանակ` հարդարելու, վարսահարդարիչ, էլեկտրափաթուկ: Բարդ հանդիսավոր սանրվածքներ ստանալու համար մազերը պետք է նախապես հարդարել կամ գանգրացնել համապատասխան սարքերով:

Մազերը կարող են լինել ամբողջությամբ կամ մասամբ հավաքված:

Ընտրված սանրվածքը պետք է թաքցնի հաճախորդի արտաքին թերությունները`փոխարենն ընդգծի նրա գեղեցկությունը:

Այսօր վարսահարդարը հնարավորություն ունի անհրաժեշտության դեպքում հաճախորդի մազերը երկարացնել կամ դրանք խտացնել: Այս գործընթացը կարող ենք իրականացնել` նախապես ձեռքի տակ ունենալով տվյալ հաճախորդի մազի գույնին և որակին համապատասխան շինյոն-մազափունջ: Շինյոն- մազափնջերն ունեն փոքրիկ, սանրանման մազակալներ, որոնց միջոցով ամրացվում են հաճախորդի մազերին: Ամրացվող հատվածը գզում են և ֆիքսում լաքով: Մազերն ամբողջությամբ հավաքած սանրվածքները լինում են սիմետրիկ /համաչափ/ և ասիմետրիկ /անհամաչափ/: Համաչափ են /սիմետրիկ/ այն սանրվածքները, որոնց դեպքում և՛ աջ, և՛ ձախ հատվածները նույնությամբ կրկնվում են: Ան- համաչափ /ասիմետրիկ/ սանրվածքների դեպքում` աջ և ձախ կողմերը իրարից տարբերվում են: Եթե սանրվածքի համար հարկավոր են գանգուր մազեր` փաթաթված վարսափաթաթուկով, ապա հարկավոր է հաճախորդի մազերը լվանալ, սրբիչով չորացնել, այնուհետև մազերին տարածել մուս` ֆիքսացիա հաղորդելու նպատակով: Կատարել մազաբաժանում: Փաթաթ- վող մազափնջերը վերցնում են հնարավորինս բարակ, որպեսզի շուտ չո- րանան: Մազերը փաթաթում են ներքևից վերև: Փաթաթելուց հետո հաճա- խորդին նստացնում են չորանոցի տակ, որը պետք է ապահովի 50°-60°C ջերմություն:

Չորանալուց հետո, որը տևում է 30-45 րոպե, թողնում ենք ևս 5 րոպե, որպեսզի մազերը սառչեն և հետո նոր միայն քանդում ենք վար- սափաթաթուկները: Սկսում են քանդել այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ փաթաթել են:
Հավաքված բարդ սանրվածքների թվին է պատկանում նաև «պոչը»: Որքան մազերը կարճ են, այնքան քիչ քանակությամբ մազ են տրամադ- րում պոչը հավաքելուն և հակառակը, եթե մազերը երկար են,ապա պոչը հավաքվում է մեծ քանակությամբ մազերով: Այն հավաքվում է գլխի այն հատվածում, որտեղ պետք է լինի

սանրվածքի ամենածավալուն մասը: Սանրվածքն ամբողջությամբ կարող է լինել աջ
կամ ձախ հատվածում: Այս դեպքում պոչը կապում են նախընտրելի կողմում: Մեկ սանրվածքի համար կարելի է ունենալ մի քանի պոչեր, բայց անկախ հավաքվող պոչի տեղից և քանակից՝ սանրվածքը գլխի վրա պետք է երևա որպես մեկ ամբողջություն՝ ապահովելով գեղարվեստական ճաշակ և հանդես գալով որպես գեղեցիկ կոմպոզիցիա:
Իրենց ոճային նրբություններով հարսանեկան սանրվածքները մյուս բարդ և հանդիսավոր սանրվածքներից առանձնանում են: Հարսնացուներն իրենց պսակադրության օրը ցանկանում են լինել յուրահատուկ, գեղեցիկ և անկրկնելի: Վարսահարդարից պահանջվում են մեծ ճիգեր՝ այդ օրը հարսնացուի համար ներկայանալի տեսք ապահովելու համար: Պարզ հավաքված սանրվածքը նույնիսկ պետք է լինի ճոխ: Հարսանեկան արարողությունը ռոմանտիկ երևույթ է, և հարսի սանրվածքն էլ պետք է հա- մապատասխանի այդ ռոմանտիկ մթնոլորտին: Հարսանեկան սանրվածքի անբաժան մասն են կազմում զարդերը: Դրանց միջոցով հնարավոր է թա- քցնել սանրվածքի որոշ թերությունները /եթե դրանք, այնուամենայնիվ, ի հայտ են եկել/ և հմայք հաղորդել դրան: Այդպիսի մի ջոցներից են թագը, փայլուն քարերը, մարգարիտները, բնական կամ արհեստական ծաղիկնե- րը, ժապավենը և այլն: Զարդարանքը պետք է համապատասխանեցնել թե' հագուստին և թե' սանրվածքին: Զարդարանքի ծավալը կախված է սանր- վածքի ծավալից:
Ավարտուն սանրվածքը պետք է լինի հարթ, առանց ավելորդ մազմզուկների /դրանք կարող ենք հարթացնել լաքի և սանրի օգնությամբ/:
Հանդիսավոր բարդ սանրվածքների ժամանակ հաճախ մազերին ծավալ հաղորդելու համար անհրաժեշտություն է առաջ գալիս դրանք զգելու:
Քանի որ զգված հատվածի արտաքին շերտը պետք է լինի շատ հարթ, այդ պատճառով թողնում են մի օժանդակ մազափունջ՝ զգված հատվածը ծածկելու համար: Հաճախորդի արտաքին տեսքի լիարժեքությունը կապահովվի, եթե
վարսահարդարումը զուգակցվի համապատասխան դիմահարդարման հետ:

Հարցեր

Նկարագրե՛ք մազերի հարդարում «բրաշինգ» մեթոդով:--------------------
------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------

Նկարագրե՛ք մազերի զգում և «տուպիրովկա» մեթոդը:--------------------
------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------

Գործնական աշխատանք

Հաճախորդը Ձեզ է դիմել խորհրդով, որպեսզի օգնեք իրեն ընտրելու բարդ հանդիսավոր սանրվածք երկար մազերի համար : Ի՞նչ քայլեր կձեռնարկեք: Որտեղի՞ց կսկսեք ձեր աշխատանքը: Ներկայացրե՛ք այն ու մեկնաբանե՛ք:

Թեմա 2.5Բարդ հանդիսավոր սանրվածքի ձևավորում՝միջին երկարության մազերի համար

Գործնական աշխատանք

Հաճախորդը Ձեզ է դիմել խորհրդով, որպեսզի օգնեք իրեն ընտրելու բարդ հանդիսավոր սանրվածք միջին երկարության մազերի համար : Ի՞նչ քայլեր կձեռնարկեք: Որտեղի՞ց կսկսեք ձեր աշխատանքը: Ներկայացրե՛ք այն ու մեկնաբանե՛ք:

Թեմա 2.6Հարսանեկան սանրվածքի ձևավորում

Գործնական աշխատանք

Հաճախորդը Ձեզ է դիմել խորհրդով, որպեսզի օգնեք իրեն ընտրելու հարսանեկան սանրվածք: Ի՞նչ քայլեր կձեռնարկեք: Որտեղի՞ց կսկսեք ձեր աշխատանքը: Ներկայացրե՛ք այն ու մեկնաբանե՛ք: